



### 38. ՈՒՐԻՇԻ ՀՄԱՐ ՖՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿԲՆԿՆԻ ՄԵՋԸ

Ընուամ ա չինուամ մի մարդ: Էս մարդը շատ հարուստ ա ըլնուամ. էլ մա՛լ, էլ դո՛լվաթ, էլ տա՛վար, էլ ուխարի սո՛ւրու, էլ ձիու ի՛լիիք, ևս ինչ գիտամ մեղրի փեթակնե՛ր, ջաղացնե՛ր, մախլասի՝ էնքա՛մ հարուստ ա ըլնուամ, որ իրանց երկրումը սրան մատով ին շանց տալի:

Էս մարդը ավալ ախըր էրկու տղա ա ունենուամ, էրկուան էլ բեղովլվաթ, ասսու էրեսիցը թափած. սաղ օրը պարապ-սարապ ման ին զալի, ըսկի միտք չին անուամ մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն: Սրանց հերն էլ ծերացե, հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե: Օրեն մի օրը հիվանդանուամ ա, տեղով-բարձով թեք ընկնուամ, էլ չի վե կենուամ, տղեքանց շարը տանուամ ա:

Տղեքը բերուամ են իրանց հորը առոք-փառոք, ոնց որ կարգն ա, ժամով, պատարագով թաղուամ են: Ըսենց անց ա կենուամ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, վե՛ց ամիս, մախլասի՝ մի տարի, օրեն մի օրը մենծ աղպերը պումուր աղպորն ասուամ ա.— Ա՛յ աղպեր, հերիք ա քեզ պահեմ, վե կաց գնա քու բանին, սրանից դենը ո՛նց ուզուամ ես գլուխ պահա:

— Ա՛յ աղպեր,— ասում ա պուճուր աղպերը,— չէ՞ որ ես է՞ քու հալալ աղպերն եմ, մի հորից, մի մորից, խի՞ ես ինձ զրկում. էսքամ մալ ու դոլվաթիցը, էսքամ հարստությունիցը բա ինձ փայ չի հասնի»:

— Զէ՛, — ասում ա մենծ աղպերը,— ե՛ս եմ, ի՛նչ կա չկա՝ հերս ինձ ա թողե, դու ընշացու ես:

— Ա՛յ աղպեր,— ասում ա, — դու ա՛րի մի ըլնի, մի անի, չէ՞ ես մեղք եմ, ես էլ քեզ պես կնկատեր, էրեխատեր եմ:

Համա ո՞ւմ ես ասում, մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաշ դնի, աղպոր կուրը բռնեց, դափ-դարդակ տանիցը դուս արեց:

Էս պուճուր աղպերն ա՛ էթում ա գեղի զլխին մի հացատուն բռնում; իրա ճնգլամուտերը անում մեջը, ապրում, ինքն էլ էթում ա սրա-նրա կուշտը ֆահլություն անում, հոտաղություն անում, օրենը մի քանի շայի աշխատում, բերում օլլուշաղ պահում:

Է՛հ, փառք իրան, ըսենց կուշ ու ձիգ անելոն յոլա էր էթում, համա մենծ աղպոր էրեսը չէր էթում: ուստու ողորմությունը շատ-ա, — ասում էր, — ամեն մարդի իրա սրտովը կտա:

Համա մենծ աղպոր սիրտը ըստ էլ չէր վեր ունում, որ իրա աղ-պերը շատ թե քիչ ապրուստ ունի, մի կտոր հացի տեր ա, օր աշ-խատում ա, օր ուտում. հերսիցը սիրտը տրաքում էր, չէր իմանում ի՛նչ անի, ո՞նց անի, որ աղպոր զլովուը մի օղիա գա, մի փորձանքի-մեջ քցի, որ սիրտը հովանա:

— Ա՛րի, — ասում ա, — աղպորս դրկեմ ֆլա՛ն սարի զլուխը՝ խարեմ, թե ընդի խաղինա կա, որ էթա՛ էլ եղ չի գա, ընդի շանա-վարերի փայ կըլնի, կմնա:

Օրեն մի օրը վեր ա կենում, զայի պուճուր աղպոր տունը:

— Բա՛րով, ա՛ղպեր, — ասում ա, — ո՞նց ես, լա՛վ իս:

— Բա՛րով, ա՛սու հազար բարին, — ասում ա պուճուր աղ-պերը, — կա՛մ էլի, յոլա եմ էթում:

— Ա՛յ աղպեր,— ասում ա, — ընշանք ե՞ր դու պտի ըտենց քյասիր, օրեն հացի մուրացկան մնաս, չէ դո՛ւ էլ ես մեղք, քու օղ-լուշաղն էլ:

— Բա ի՞նչ անեմ, ա՛յ աղպեր,— ասում ա:

— Որ մի բան ասեմ, անկաշ կանե՞ս:

— Խի՛ լեմ անի, — ասում ա, — ասա:

— Բա՛ս որ ըտենց ա, մի շվալ վե կալ, գնա ֆլա՛ն սարը: Ընդե-

ման կդաս, մի էր կգտնես, կմննես էդ էրը, կտեսամ մեջը լիքը ու-  
կի, խազինա, ակն ու մարգարիտ, բոլիանտ ու հազար մի ջուռա  
թանկաղին քարեր. վե կունես, կրերես, կհարստանաս, քանի սաղ  
ու կննդանի ես, ոլուխդ դինչ քեզ հմար դովյան կրաշես:

— Դո՞րթ, — հարցնում ա պուճուր աղպերը:

— Դո՞րթ, — ասում ա մենծ աղպերը:

— Բա՛ս որ ըտենց ա՛ հենց էգուց ճամփիա կընկնեմ:

Էդ պուճուր աղպերն ա՛ առավոտը լիսանում ա թե չէ, կնկան  
ասում ա. — Այ' կնիկ, թե՛զ արա մի ջվալ բե՛, մի քիչ էլ հաց թրշա,  
կապա՛ դաստախումը:

— Խի՞ն, ա՛յ մարդ, ի՞նչ կա, ո՞ւր ես էթում, — հարցնում ա  
կնիկը:

— Աղպերս ասում ա՛ ֆլա՛ն սարի կշտին մի էր կա, էդ էրը  
միքը սակի ա, էթում եմ բերեմ:

— Բախտա՛վար զլիսիդ, — ասում ա կնիկը, — աղպորդ լսեցիր,  
որ քու ձեռովկը քու տունը քանդեցիր, է՛:

— Դե՛ շատ մի՛ խոսա, — բարկանում ա մարդը, — ի՞նչ քու  
խելքի բանն ա. քեզ ի՞նչ ասում եմ՝ է՛ն արա:

Կնիկը բերում ա մի քանի հաց թրշում, կապում դաստախումը,  
մի ջվալ էլ բերում տալի մարդին: Էս պուճուր աղպերն ա՛ դաստա-  
խումը քցում ա ջվալի մեջը, վեր ունում, ընկնում ճամփիա: Էթում  
ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա աղպոր ասած  
սարը: Տենում ա մի չոլ, յարանի տեղ, որ ըսկի իսանաֆոտ շի գալի:

— Վա՛յ քու տունը քանդվի, ա՛ղպեր, — ասում ա, — ինձ որդե  
զրկեցիր. ի՞նչ անեմ, ի՞նչ զլովս վայ տամ, հմի շանավարները  
կդան, ինձ կուտենի:

Գե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, որ մի տեղ գտնի, ընդի  
սըթար անի: Որ շատ ման ա գալի: տենում ա հրես մի էր, կողքին  
էլ մի մենծ քար, ընենց որ էդ քարը տալդա ա անում էդ էրին: Մըն-  
նում ա էդ քարի տակը, ջվալը քցում զլիսին, կուշ գալի: Անց ա կե-  
նում մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, ի՛րեք սհաթ, տենում ա հրես էկան՝  
մի Մուկը, մի Գել, մի Աղվես, մըն էլ մի Արչ, էկան մտան էդ էրը,  
իրար կշտի նստոտեցին: Պուճուր աղպերը էս շանավարներին որ չի  
տենում, քիչ ա մնում ահաշոր ըլնի, լեղաճաք ըլնի մնա:

— Օ՛ֆ, օ՛ֆ, — ասում ա Մուկը:

— Հը՛, խի՞ն դարտոտեցիր, — հարցնում են ընկերտինքը:

— Բա ի՞նչ անեմ, — ասում ա, — իմ բունը մի մենծ, դարտակ տեղ ա. բնիս կշտին մի կարաս ոսկի ա ֆորած, մարդ էլ շրկա, որ վեր ունի, տանի. ընձ էլ պետքը չի, որ ուտեմ, յա բանացնեմ, մնացել եմ սոված զկոտալուն:

— Է՛հ, — ասում ա Արջը, — էկեք իմ դարտիցը խարար տվեք. ֆլա՛ն տեղը մի ծառ կա, էդ ծառի բոքին մեղրի ճանճերը էկել են բում դրե, էնքա՞մ մեղր ածե, էնքա՞մ մեղր ածե, որ էլ տեղ ու դադար չկա, — էնքամ ա մեղրը զիզվե, կիտվե, թոփ էլե, մնացե: Համաի՞նչ անեմ, որ շեմ կարում մոտանա, էն սհաթը ճանճերը վրա են տալի, կծոտում, դադդորիկ ածում:

Հսենց ջանավարները մին-մին դարտլամիշ են ըլնում: Էս մարդը ըստոնք որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում:

— Իմ խեղճ աղպերը, — ասում ա, — ընդուր էր ինձ զրկում ըստե. հալբաթ նա մի բան զիտար, որ ասում էր, Հո իմ դուշմանը չէր:

Առավոտը բարիլսի հեննա ջանավարները վեր են կենում, էթում իրանց բանին: Էդ մարդն էլ ալուատի վեր ա կենում ըտիան ծըլկվում: Էթում ա աղաք Մկան ասածը տեղը: Ման ա գալի, ման ա գալի, Մկան բունը գտնում ա: Էթում ա մի տեղան մի քլունգ ա ճարում, բերում Մկան բնի կուշտը քանդում: Քանդում ա, քանդում ա, մի էրկու, իրեք արշին քանդում ա, տենում ա, ըհը՝, դրուստ որ մի կարաս էրեաց: Կարասի բերանը բաց ա անում, ի՞նչ տենում մեջը միքը ոսկի: Բերում ա էդ ոսկուցը մի բուռը վեր ա ունում, ածում շերը, էլ եդ կարասի բերանը դայիմ ծեփում, ֆողը եդ վրա ա տալի, թողում, էթում: Ըստ մոտիկ մի գեղ ա ըլնում, էթում ա էդ գեղը, մի տասը, քսան ֆահլա բռնում, բաննահ բռնում, խառադ բռնում, մախլասի՞ տուն շինելու հմար ի՞նչ ուտա պետքն էր բռնում ա, հենները բարշում, բերում էդ շոլ, յարանի տեղը:

— Հստե, — ասում ա, — ինձ հմար մի ձեռք տո՛մ շինեք:

Ուստեքը բանում են, բանում մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, վե՛ց ամիս ըտե մի ձեռք ընե՞նց տներ են շինում, ընե՞նց տներ են շինում, որ չուտես, շիմես՝ հենց դրան թամաշ անես, ընենց մի սիրունիկ զադ էր: Եննա դրա կշտին էլ մի քանի պուճուր օթախներ ա շինիլ տալի, մի քանի նոքար բռնում, որ ընդե կենան, իրա տներին մուղաթ կենան: Եննա բերում ա մի տասը, քսան փեթակ ա շինիլ տալի, իրա նոքարների հեննա վե կենում, էն փեթակ-

Ները վեր ունում, գալի, էն Արջի ասած ծառը ման ա գալի, գըտնում. տենում ա՝ դրուտ որ էնքա՛մ մեղը ա կիտվե, էնքա՛մ մեղը ա կիտվե, որ էլ հեսար չկա: Մեղը բիրադի հավաքիլ ա տալի, ածիլ տալի ամանները, մեղը ճանճերն էլ քշում, անում փեթակները, բերում: Բերում ա փեթակները իրա հայաթումը շարոտում, մեղըն էլ դնում ա մի օթախ, դուռը շինում:

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը միտք ա անում՝ էթա իրանց գեղը: Տները նոքարներին պահ ա տալի, ինքը վե կենում, ընկնում ճամփա: Գալիս ա, գալի, շատն ու քիշն աստոծ զիտա, հասնում ա իրանց գեղը. հասնելու բաշտան դուզ էթում ա աղպոր տումը:

— Բա շես ասի,— ասում ա, — ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան:

Նստում ա ըստե մին-մին նազլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեղ նազլ արի: Մենծ աղպերը էս որ լսում ա, մնում ա մաթալ:

«Ա՛յ հարա՛յ, — ասում ա ինքն իրան, — ես աղպորս ղոկեցի, որ դուրդ ու դշի, շանավարների փայ ըլնի, նա գնացե, հարստություն, մալ ու դոլվաթ ա զտե: Բա՛ս որ ըտենց ա, — ասում ա, — ես էլ կէթամ, բալի ես էլ եմ գտնում»:

Էն մենծ աղպերն ա՝ առավոտը սուրբ ծեքի հեննա վեր ա կենում, կնկանիցը թաքուն հաց-մաց կապում, մի չվալ վեր ունում՝ ընկնում ճամփա: էթում ա, էթում, հասնում ա էն սարը: Մենում ա աղպոր ասած տեղը, տափ կենում: Տենում ա իրիկունը էլի էն շանավարներն էկան, էկան մտան էրը, իրար կշտի նստոտեցին:

— Ըսկի ի՛նչ կա, ի՛նչ չկա, — հարցնում են իրար շանավարները:

— Էլ ինչ պտի ըլնի, — ասում ա Մուկը, — իմ բնի վրեն էկել են ամարաթներ շինե, էն ոսկիքն էլ քոմմա հանե, տարե. կա, չկա, — ասում ա, — էն օրը ըստե իսանառդի ա տափ կացե, մեր մասլահաթին անկաջ ա դրե:

— Էդ օյինը իմ գլուխն էլ են էկե, — վրա ա բերում Արջը, — մեղը թրիշա շեն թողե, քոմմա տարել են:

— Բաս որ ըտենց ա, — ասում են Աղվեսն ու Գելը, — էկեք վե կենանք մա՛ն գանք:

— Էկե՛ք, — ասում են մեկեները:

Մենծ աղպեր, ըստը ես մեռե թե էդուց, էս որ լսում ա, զանբ-  
մահման դող ա ընկնում, դողմանի դիպնում:

Էդ շանավարները վեր են կենում դե՛ս ընկնում, դե՛ն ընկնում,  
գալիս են էդ քարի տակը՝ մննում, ի՞նչ տենում, ը՞զ, հրեսիկ մի-  
մարդ ընդի կուշ ա էկե, մնացե: Վրա են պրծնում դրան փարչա-  
փարչա անում, ձմիգ-ձմիգ անում, մենծ թիքեն անկաջը թողում:

Սրան թողանք ըստե, զանք խարար տանք պումուր աղպորիցը:

Էս պումուր աղպերը որ տենում ա մենծ աղպերը եղացավ, չէ-  
կավ, ալրիալը գլխի ա ընկնում, որ էն զանա՞շարների ձեռն ա ընկե,  
նրա մենծ թիքեն անկաջն են թողե, Շատ ա դարտ անում, գլխին-  
վա՞յ տալի, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե: Վեր ա կե-  
նում, էթում աղպոր տունը, աղպերակնկանը մին-մին նազլ անում  
աղպոր գլխով անցկացածը:

— Տե՛ղն ա,— ասում ա աղպերակինը,— «Ուրշի հմար ֆոր փո-  
րողը ինքը կընկնի մեջը»:

— է՛հ, աղպերակին,— ասում ա,— բա՛ն չկա, ի՞նչ էլավ-  
էլավ. դե՛ս տուն ու տեղդ հավաքա, էն սարի գլխին լավ-լավ ամա-  
րաթներ եմ շինե, էթանք ընտե ապրենք:

— է՛թանք,— ասում ա աղպերակինը:

Էգսի օրը վեր են կենում, մի տասը սել քրեհում, այնոյինը-  
բարձում, ընկնում ճամփա: Գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ-  
գիտա, հասնում են պումուր աղպոր ամարաթը: Զատ-մատերը դար-  
սոտում են, տեղավորում, օթախները լքնում, սարքում՝ միշին  
կենում:

Ուրիշ դհարենքից էլ մարդիկ էս որ լսում են, վեր են կենում-  
գալի ըտե տներ շինում, ապրում: Ընենց որ կամաց-կամաց ըտե-  
եքա շենլիկ ա դառնում:

Ըսենց պումուր աղպերը իրա հալալությունովը մենծ հարստու-  
թյունի; մալ ու գոլվաթի տեր ա դառնում, մենծ աղպերը իրա շկա-  
մությունովը, խայինությունովը շանավարների փայ ըլնում:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ ասիը-  
տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին:

